

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԿԸ ՔԱԶԱԼԵՐԷ ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄ

Երուսաղեմ.- (Տեղեկատու դիւան)

Երուսաղեմի Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան կոչ կ'ընէ աշխարհի բոլոր Հայերուն որ ուխտագնացութեան համար Երուսաղեմ գան եւ այցելեն Սուրբ Քաղաքը որ ծննդավայրն է Քրիստոնէութեան ու Մովսիսական կրօնին եւ երկրորդ սրբավայրը Իսլամութեան:

Սրբազան Հայրը իր կոչը կ'ուղղէ Հայաստանեայց Եկեղեցւոյ զանազան Թեմերուն եւ Առաջնորդներուն, սփիւռքահայ զաղութներու ղեկավարներուն, որ գործօն դեր խաղան եւ քաջալերեն իրենց Ծուխերուն եւ հայրենակիցներուն որ Երուսաղեմ այցելեն: Հայաստանեայց Եկեղեցւոյ կեդրոն Ս. Էջմիածնէն յետոյ Երուսաղեմը երկրորդ կարեւոր տեղը կը համարուի:

«Հայերու համար, անոնք ուր ալ որ գտնուին, Երուսաղեմը աշխարհի կեդրոնը կը համարուի», Պատրիարք Հայրը ըսաւ: «Այստեղ, աշխարհի այս սուրբ վայրին մէջ գտնուիլ, ուր Յիսուս ապրեցաւ, մեռաւ եւ յարութիւն առաւ, եզակի առանձնաշնորհում մըն է որ մենք եւ միւս բոլոր քրիստոնէաները ունինք»: Ան ըսաւ:

Երուսաղեմի այցելութիւնը մեծ փորձառութիւն մըն է զբօսաշրջիկներու եւ ուխտաւորներու համար: Ոչ անոր համար որ Երուսաղեմը աշխարհի առաջնակարգ զբօսավայրերէն մէկը կրնայ համարուիլ իր հմութիւններով ու իր Միջերկրականի ծովեզերքեան բնութեամբ, այլ անոր համար որ քրիստոնէութեան ծննդավայրն է:

Ս. Քաղաք կ'այցելեն զբօսաշրջիկներ աշխարհի զանազան երկիրներէն մասնաւորապէս արեւմուտքէն: Անոնք այս քաղաքին մէջ նոյն հանգստութիւնը կ'ունենան ինչպէս աշխարհի միւս բոլոր մեծ մայրաքաղաքներուն մէջ: Երուսաղեմի մթնոլորտը բնաւ ապակամած չէ, իր մեղմ եղանակը եւ պայծառ արեւոտութիւնը զայն կը դարձնեն հրաշալի զբօսավայր մը:

«Ամէն ինչէ աւելի Երուսաղեմը սրբատեղի մըն է», Սրբազան Հայրը շեշտեց: «Երուսաղեմը կարեւոր է ոչ միայն բոլոր անոնց որոնք նուիրուած Աստուածավախներ են այլ իւրաքանչիւր անհատի համար որ ինքզինք քրիստոնէայ կ'ամուսնէ»:

Զբօսաշրջիկներու եւ աշխարհաշրջիկներու համար ասացուածք մը կայ որ կ'ըսէ «Վեներտիկ այցելեցէք եւ յետոյ մեռէք», բայց Պատրիարք Հայրը նոր նշանաբանով հանդէս կու գայ « Երուսաղեմ այցելեցէք եւ ապրեցէք »:

Հայ ուխտագնացութիւնը դէպի Ս. Երկիր գրեթէ դադրած էր վերջին տասնամեակներուն, բայց Ս. Աթոռի նորընտիր եւ լայնմիտ Պատրիարքի օրերուն սփիւռքահայ զաղութները աւելի լայն հետաքրքրութիւն ցոյց կու տան Ս. Երուսաղեմին հանդէպ, որ հետզհետէ պիտի ծաղկեցնէ Ս. Երկրի Հայ ուխտագնացութիւնը:

Իր առօրեայ եւ վարչական գործերը դասաւորելէ եւ վերահսկելէ բացի, Պատրիարք Հայրը ոչ միայն գործ հայթայթած է երիտասարդ ու նուիրուած մասնագէտներու, այլ նաեւ հոգեւոր կրթութեան համար Երուսաղեմ հրաւիրած է շարք մը նոր հայ ուսանողներ մինչեւ իսկ հեռաւոր Ռումանիայէն եւ Ամիրիկայէն:

«Մեր հիմնական հարցը այս ուսանողներում, դասատուներում եւ ուխտաւորներում բնակութեան վայր հայրայրելիմ է»: Այլքս եւ Մարի Մամուկեան ընծայարանը կրճայ միայն հարիւր հոգի տեղաւորել: Զրօսաշքշիկները տեղական պանդոկներու հետ պետք է որ իրենց կարգադրութիւնը ընեն:

«Մենք լիայոյս ենք որ պիտի կարենանք բարելաւել ներկայ կացութիւնը» Սրբազան Հայրը ըսաւ:

Մրագիր ունինք նաեւ շէնք մը կառուցելու Ա. Յակոբեանց վանքի շրջափակէն ներս որ ապագայիմ գոհացում պիտի տայ մեր հայ այցելուներուն: Այդ ծրագիրը իրականացնելը մեծ դրամագլուխի կը կարօտի:

Ներկայիս Պատրիարքութիւնը գրադուած է Վարդապետանոցի շինարարութեամբ որուն ծախքերով ծանրարեւոնուած է:

« Ծիշդ է որ մեր ներկայ հանգանակութիւնը մեզ որոշ գումարով մը կը գոհացնէ, բայց ծախքերը շատ-շատ աւելի են: Մեր արտասահմանի բարեկամներուն նիւթապէս մեզ սատարումը իսկապէս գնահատելի է», Պատրիարք Հայրը ըսաւ:

Յուլիս 1, 1991

 **ՊԱՏՐԻԱՐԻԱՐԿԱՐԱՆ** **ՄԱՅՈՑ**
ARMENIAN PATRIARCHATE

ԵՐՈՒՍԱԿԵՄ ԱՅՅԵԼԵՅԷՐ

Հայ Հոգևորական Եղբայրներում.

Ա. Բաղաք Երուսաղէմն ձեզ կ'ողջունենք եւ կը զրկենք մեր օրհնութիւններն ու ազօրջնէքը:

Ձեզ կը զրկենք առաջարկելով որ ձեր Եուրիւրում մէջ ըստպէտք ուխտագնացութիւնը ղէպի Երուսաղէմ:

Մեր ժողովուրդի ինչպէս նաեւ աշխարհի զանազան ծայրամասերում մէջ զտնուող բոլոր Բրիտանացիներում համար, Երուսաղէմը հաւատքի բնոջ մըն է եւ աշխարհի կենրոնը կը համարուի:


Այս սուրբ վայրիմ մէջ զտնուիլը եզակի առանձնաշնորհում մըն է: Այստեղ է որ մեր Տէր Յիսուս Բրիտանացի ապրեցաւ, մեռաւ եւ յարութիւն առաւ:

Երուսաղէմը լոկ զրօսաշքշիկութեան վայր մը չէ այլ սրբավայր մըն է, ուր հաւատացեալ քրիստոնէսայի հոգիմ կը Յորդազի Բրիտանացի մոր ուխտով:

Այս սուրբ վայրերում մէջ քրիստոնէան կրճայ իր հաւատքը զօրացնելու:

Հետեւելով մեր Տիրոջ հետեւում Երուսաղէմի մեզ փողոցներում մէջ, ազօրելով եւ իսկուով այն սրբավայրերում մէջ որոնք աղոթուած են իր կենցիկն հետ, ծնրադրելով իր զերեզմանիմ առաջ, վերապրելով Գերսեմանիի մէջ իր տաղմազը, հաւատացեալ Բրիտանացիմ առիթ կը տրուի մոր կենցիկով եւ հաւատքով լեցուելու: Ինչպէս Տիրուս ըսաւ . . . «Պարտ է վերստիմ ծննդիմ»:

Երուսաղէմ կէք եւ ապրեք:



Թորգոմ Արքեպ. Մամուկեան
Պատրիարք Երուսաղէմի